Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

Եղիշե Կիրակոսյան՝ Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ

Լիպարիտ Դրմեյան՝ Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի ղեկավար

Արամ Արամյան՝ Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի միջպետական վեճերով ՀՀ շահերի պաշտպանության վարչության պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
Նիդերլանդների Թագավորություն, քաղաք Հաագա; 2023թ. հոկտեմբերի 9-13

3. **Հրավիրող կողմը.**
Կիրառելի չէ

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Գործուղման նպատակն էր ապահովել Արդարադատության միջազգային դատարանում Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի շրջանակներում Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի դատական գործով Հայաստանի կողմից ժամանակավոր միջոցներ կիրառելու մասին միջնորդության վերաբերյալ լսումներին պատրաստությունը, մասնակցությունը և Հայաստանի Հանրապետության շահերի պաշտպանությունը:

5. **Քննարկված թեմաները.**
Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի հիման վրա Արդարադատության միջազգային դատարանում քննվող Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի դատական գործի շրջանակներում ժամանակավոր միջոցի կիրառումը:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

2023թ. սեպտեմբերի 28-ին ՀՀ Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության անունից դիմում է ներկայացրել ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարան՝ Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման միջազգային կոնվենցիայի շրջանակներում քննվող Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի դատական գործով ժամանակավոր միջոց կիրառելու մասին միջնորդությամբ:

Հայաստանի կողմից ներկայացված ժամանակավոր միջոցի կիրառման մասին միջնորդության հիման ս.թ. հոկտեմբերի 12-ին Արդարադատության միջազգային դատարանում ընթացան դատական լսումներ:

Լսումներին մասնակցեցին Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը՝ ով նաև հանդես եկավ ելույթներով, Դատարանին ներկայացնելով Հայաստանի իրավական դիրքորոշումները և փաստական ապացույցները, ինչպես նաև Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի ղեկավար Լիպարիտ Դրմեյանը և Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի միջպետական վեճերով ՀՀ շահերի պաշտպանության վարչության պետ Արամ Արամյանը: Լսումներին Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկավ Հայաստանին իրավաբանական խորհրդատվություն տրամադրող միջազգային իրավաբանների թիմը: Լսումներին նախորդող ժամանակահատվածում ընթացան ծավալուն նախապատրաստական աշխատանքներ, քննարկումներ, այդ թվում նաև Հայաստանին իրավաբանական խորհրդատվություն տրամադրող միջազգային իրավաբանների թիմի անդամների մասնակցությամբ:

Լսումների ընթացքում Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը ներկայացրեց Ադրբեջանին ուղղված Հայաստանի ամփոփիչ տասը պահանջները:

Հայաստանը, մասնավորապես, պահանջել է հետևյալ միջոցները.

1. Ադրբեջանը պետք է չձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք կարող են առաջացնել միջազգային կոնվենցիայով իր պարտավորությունների խախտումներ:

2. Ադրբեջանը չպետք կատարի գործողություններ, որոնց նպատակն է ուղղակիորեն կամ անուղղակիորեն տեղահանել Լեռնային Ղարաբաղում մնացող հայազգի անձանց, կամ կանխել վերջին ռազմական հարձակումների ընթացքում տեղահանված անձանց արագ և ապահով վերադարձը իրենց տներ, այդ թվում՝ նրանց, ովքեր փախել են Հայաստան կամ երրորդ երկրներ: Միևնույն ժամանակ, Ադրբեջանը պետք է առանց խոչընդոտի թույլատրի նրանց, ովքեր ցանկանում են հեռանալ Լեռնային Ղարաբաղից:

3. Ադրբեջանը պարտավոր է ռազմական և իրավապահ ողջ անձնակազմը հեռացնել Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական բոլոր բնակավայրերից, որոնք զբաղեցվել են 2023 թվականի սեպտեմբերի 19-ի զինված հարձակման հետևանքով:

4. Ադրբեջանը պետք է օգնի և խոչընդոտ չառաջացնի, որպեսզի ՄԱԿ-ը և նրա մասնագիտացված կազմակերպությունները կարողանան աշխատել Լեռնային Ղարաբաղի էթնիկ հայերի հետ: Ադրբեջանը չպետք է որևէ կերպ միջամտի նրանց գործունեությանը:

5. Ադրբեջանը պետք է օգնի և որևէ կերպ չխոչընդոտի, որպեսզի «Կարմիր խաչի» միջազգային կոմիտեն կարողանա օգնություն ցուցաբերել Լեռնային Ղարաբաղի էթնիկ հայերին: Ադրբեջանը պարտավոր է համագործակցել «Կարմիր խաչի» հետ, որպեսզի հաղթահարվեն վերջին հակամարտության մյուս հետևանքները:

6. Ադրբեջանը պարտավոր է անմիջապես ապահովել կոմունալ ծառայությունների, այդ թվում՝ գազամատակարարման ու էլեկտրաէներգիայի մատակարարման լիարժեք վերականգնումը Լեռնային Ղարաբաղում և պետք է ապագայում դրանք չխաթարի:

7. Ադրբեջանը պարտավոր է պատժիչ գործողություններ չձեռնարկել Լեռնային Ղարաբաղի ներկա կամ նախկին քաղաքական ներկայացուցիչների կամ ռազմական անձնակազմի նկատմամբ:

8. Ադրբեջանը չպետք է ձևափոխի կամ ոչնչացնի որևէ հուշարձան՝ նվիրված 1915 թվականի Հայոց ցեղասպանության հիշատակին կամ որևէ այլ հուշարձան, հայկական մշակութային վայր, որ դեռ կա Լեռնային Ղարաբաղում:

9. Ադրբեջանը պարտավոր է ճանաչել և օրինական համարել քաղաքացիական գրանցամատյանները, անձը հաստատող փաստաթղթերը, գույքի նկատմամբ իրավունքները և ռեգիստրները, որոնք ստեղծված են եղել Լեռնային Ղարաբաղի իշխանությունների կողմից: Ադրբեջանը պարտավորված պետք է լինի չոչնչացնել և չբռնագրավել այդ մատյաններն ու փաստաթղթերը:

10. Ադրբեջանը պարտավոր է ՄԱԿ-ի դատարանին հաշվետվություններ ներկայացնել այն բոլոր միջոցառումների վերաբերյալ, որոնք պետք է ձեռնարկի տվյալ կարգադրությունն իրագործելու ուղղությամբ, որոշման կայացումից մեկ ամսվա ընթացքում, որից հետո յուրաքանչյուր երեք ամիսը մեկ, մինչև որ դատարանն այս գործով կայացնի վերջնական որոշում:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
Կիրառելի չէ

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**
Կիրառելի չէ

10/18/2023

X

Ստորագրությունը, ամսաթիվը: Signed by: KIRAKOSYAN YEGHISHE 2605820416

18 հոկտեմբեր 2023թ.